



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 439  
Ապրիլ 15, 1991

Ազնուափայլ  
Տիկին Ճյորջնա Գարոլյանեան  
Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Գլխվրնտ.

Ազնի Տիկին Գարոլյանեան,

Ստացած ենք Մարտ 22, 1991 թուակիր ձեր նամակը եւ Եկեղեցոյ տեղեկագիրը, որոնց համաձայն Փետրուար 24, 1991-ին գումարած համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներ: Կը տրուին քուէարկութեան արդիւնքները եւ կը խնդրուի նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Արչի Անտոնեան  
Ծէք Խաչերեան  
Բասըլ Արսլանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովին ներկայացուած Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Հոգեւոր Հովիւին (եթէ համայնքը ունի) Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Կը մաղթենք որ Տէրը Իր հովանին անպակաս ընէ համայնքիդ անդամներուն վրայէն եւ բոլորիդ եկեղեցանուէր գործերուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ